ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ
BYBLOS BANK ARMENIA

## Գործունեության վերլուծություն 2013թ.

Բիբլոս Բանկ Արմենիա ՓԲ ընկերությունը 2013 թվականին իր գործունեության ընթացքում շարունակել է հետեւել ցածր ռիսկայնությամբ կայուն աճի պահպանողական ռազմավարությանը, որը սահմանված է բանկի բաժնետերերի՝ Բիբլոս Բանկ ՍԱԼ-ի, Վերակառուցման եւ Զարգացման Եվրոպական Բանկի և Նավթարդյունահանող երկրների զարգացման հիմնադրամի կողմից:

Տարվա ընթացքում Բանկը պահպանել է բարձր իրացվելիության մակարդակ եւ շարունակել է ձեւավորել հաճախորդների կայուն եւ հավատարիմ բազա: Տարվա ընթացքում Բանկն առավելապես ընդլայնել է հիփոթեքային եւ փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորումը:

Բանկի տարեկան ֆինանսական արդյունքը բացասական ազդեցություն է կրել երեք խոշոր վարկառուների ֆինանսական վիճակի վատթարացման եւ որպես հետեւանք Բանկի կողմից հնարավոր վնասների ծածկման պահուստների ավելացման արդյունքում: Առկա պահուստները համարժեք են հնարավոր կորուստներին, եւ առաջիկա տարիների ընթացքում բանկը կվերականգնի շահութաբերության մակարդակը ընթանալով մանրածախ բանկային ծառայությունների եւ մանր ու միջին ձեռնարկությունների վարկավորման առաջխաղացման ռազմավարությամբ:

2013 թվականին բանկի ընդհանուր ակտիվները նվազել են 12.9% եւ կազմել են 42,615 միլիոն դրամ: Ընդհանուր վարկային ներդրումներն աճել են 3.2%-ով եւ կազմել են 24,105 միլիոն դրամ, մինչդեռ սպառողական վարկային պորտֆելը աճել է 27.8%-ով եւ կազմել է 10,203 միլիոն դրամ: Հաճախորդներից ներգրավված ավանդները կազմել են 24,389 միլիոն նախորդ տարվա 24,946 միլիոն դրամի համեմատ: 2013 թվականի ընհանուր համապարփակ վնասը

## Performance Analysis 2013

During 2013 Byblos Bank Armenia continued to follow a conservative strategy of stable growth and low risks as set by the shareholders of the bank: Byblos Bank SAL, the European Bank for Reconstruction and Development and the OPEC Fund for International Development.

During the year, the Bank has operated with sufficient level of liquidity and has continued to steadily grow sustainable and loyal clientele. The Bank has mainly increased its housing loan and small business loan portfolios.

During this period, the financial standing of the three largest commercial borrowers deteriorated and accordingly the Bank increased its loan loss provisions, which negatively impacted the annual financial result of the Bank. The existing level of loan loss provisions is adequate to the possible losses and during the upcoming years the Bank will return to its usual profitability level through concentration on retail, small business and middle market lending.

In 2013, the Bank's total assets decreased by 12.9% reaching AMD 42,615 million. Total loans to customers increased by 3.2% reaching AMD 24,105 million, while retail loan portfolio increased by 27.8% and amounted to AMD 10,203. Customers' deposits amounted to AMD 24,389 million compared to AMD 24,946 as of Dec 2012. Total comprehensive loss amounted to AMD 156 million compared to total comprehensive income of AMD 191 million.

կազմել է 156 միլիոն դրամ, նախորդ տարվա 191 միլիոն դրամ եկամուտի համեմատ:

Առաջիկա տարիների ընթացքում Բիբլոս Բանկ Արմենիան շարունակելու է առաջնորդվել թափանցիկ կորպորատիվ կառավարման սկզբունքներով, ռիսկերի կառավարման պահպանողական մոտեցմամբ եւ կայուն աճի ռազմավարությամբ՝ նպատակ ունենալով ապահովել բանկի ֆինանսական կայունությունը, հաճախորդների բավարարվածությունը և նպաստելով Հայաստանի տնտեսության զարգացմանը:

During the coming years, Byblos Bank Armenia will continue its stable growth strategy with transparent corporate governance and prudent risk management, aiming to ensure financial stability and clients’ satisfaction while contributing to the development of Armenia’s economy.

Ալան Թոհմե / Alain Tohme
Խորհրդի նախագահ / Chairman of the Board

Ալան Վաննա / Alain Wanna
Խորհդի անդամ / Board member